ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

СОЮЗ ХУДОЖНИКОВ АРМЕНИИ

375001. ԵՐԵՎԱՆ / ЕРЕВАН 1. ԱԲՈՎՅԱՆ Փ. / ул. АБОВЯНА 18 ☎ 56-47-24, 56-48-53

Gov. 65-42

24.01.1995թ. № 18

На № ______ от ______

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊՐՈՖԵՍՈՐ ՊԱՐՈՆ
ԱՐՄԵՆ ՏԵՐ-ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻՆ

Սիրելի Արմեն. այսքան մոտիկ ձևով Ձեզ դիմելու պատճառը Ձեր սիրելի հայրիկի ցուցահանդեսի հետ կապված հուշերն են, որի շնորհիվ պատիվ ունեցա ծանոթանալու Ձեզ հետ և բոլորովին չէի սպասի որ մի օր էլ համագործակցության առաջարկ եմ անելու, քանզի այժմ ներկայացնում եմ Հայաստանի ամենամեծ ստեղծագործական միություններից մեկը՝ նկարիչների միությունը: Կարիք չկա նկարագրելու մեր բոլոր դժվարությունները որոնց գոյություն ունեն մեր Հանրապետությունում:Ուստի կուզենայի իմանալ, հնարավոր՞ է արդյոք Ձեր խողովակներով նկարիչների միությունը ծեռք բերի 1 ֆաքս, 1 կոմպյուտոր և 1 քսերոքս, որի դիմաց կարող էինք մեր ֆոնդերից Ձեզ տրամադրել նկարներ Ամերիկյան համալսարանի պատերը զարդարելու համար: Կարող էինք նաև համատեղ, փոխշահավետ ցուցահանդեսներ կազմակերպել նաև Ամերիկայում, ուզած հեղինակի կամ հեղինակների մասնակցությամբ:

Հուսով եմ անպատասխան չեք թողնի այս երկտողս:

Բարի մաղթանքներով

ՀՀ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՊՈՂՈՍ ՀԱՅԹԱՅԱՆ